

Առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հասկացությունը, հատկանիշները և քրեաիրավական բնութագիրը

Բաղդասարյան Մ. Ռ.

*ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցող (Երևան, Հայաստան)
mariam.baghdasaryan.1992@mail.ru*

Վճռորոշ բառեր՝ դաժանություն, առանձին դաժանություն, օբյեկտիվ կողմ, հատկանիշներ, կատարման եղանակ, առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքներ, գործողություններ, իրավիճակ, մերձավոր, անարգանք, ստորացում, նվաստացում, ծաղրուծանակ, տանջանք, տառապանք:

Понятие, признаки и уголовно-правовая характеристика объективной стороны убийства, совершенного с особой жестокостью

Багдасарян М. Р.

*Соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права Института права и политики РАУ (Ереван, Армения)
mariam.baghdasaryan.1992@mail.ru*

Аннотация. Особая жестокость – обстоятельство, характеризующее объективную сторону убийства, и превращающее деяние в квалифицирующее обстоятельство.

Обстоятельствами, характеризующими объективную сторону убийства, совершенного с особой жестокостью, являются способ совершения убийства, другие обстоятельства, указывающие на особую жестокость преступника, в том числе ситуация.

Ввиду многочисленности способов, характеризующих особую жестокость, перечислить их все невозможно.

Способ совершения убийства зачастую свидетельствует об особой жестокости, проявленной преступником, в результате чего жертве причиняется невыразимо тяжелые, длительные, физические или психические страдания. Например, сжигание человека заживо, погребение заживо, бросание человека в кипящую воду, запираение в высокотемпературной сауне или задерживание в холодном месте, являются формами особой жестокости и содержат в себе признаки безжалостности, изуверства и жестокости, проявленной преступником.

Особая жестокость может проявляться в виде нанесения множественных ранений, истязаний, мучений, пыток, жестокого обращения, унижения человеческого достоинства, издевательств и других форм.

Глумление над потерпевшим или иное унижение жертвы из-за осознания неминуемой смерти, в результате которой жертва подвергается серьезным физическим и моральным страданиям, являются, по нашему мнению, проявлениями особой жестокости, где как способ убийства, так и другие обстоятельства, свидетельствующие об особой жестокости преступника, могут сочетаться.

В связи с обстоятельствами совершения преступления и причинения особых мучений, страданий потерпевшему или его родственникам, убийство следующей жертвы, так как она находится в присутствии родственника, следует квалифицировать как убийство, совершенное с особой жестокостью.

В случаях, когда в силу таких обстоятельств, как состояние сильного алкогольного опьянения или потеря сознания после первого удара, жертва не чувствовала особых страданий, действие преступника также квалифицируется как убийство, совершенное с особой жестокостью.

Во всех случаях убийства, совершенного с особой жестокостью общим половым признаком являются причинение дополнительных сильных страданий потерпевшему или его близким.

В этом случае при квалификации деяния не может быть различия между двумя равными обстоятельствами, характеризующими особую жестокость: особо жестоким способом совершения преступления, охватываемым умыслом виновного и другими обстоятельствами, свидетельствующими об особой жестокости виновного, включая причинение особых пыток и страданий потерпевшему или его близким лицам.

Ключевые слова: жестокость, особая жестокость, объективная сторона, признаки, способ совершения, другие обстоятельства, свидетельствующие об особой жестокости, действия, ситуация, близкие, оскорбление, унижение, высмеивание, мучение, страдание.

The concept, features and criminal significance of the objective side of a murder committed with a certain cruelty

Baghdasaryan M. R.

*Applicant for the Department of Criminal Law and Criminal Procedure Law of the Institute of Law and Politics of RAU (Yerevan, Armenia)
mariam.baghdasaryan.1992@mail.ru*

Abstract. A particular cruelty is a circumstance that characterizes the objective side of the murder, making the act qualitative.

The objective aspects of a murder committed with particular cruelty are the manner in which the murder was committed, and other circumstances that indicate the particular cruelty of the murderer, including the situation.

There are many ways to describe particular cruelty, and it is impossible to list them exhaustively.

The manner in which the murder was committed is often a clear indication of the particular cruelty shown by the perpetrator, which resulting in the unspeakably severe, continuous, physical or mental suffering of the victim. For example, burning a person alive, burying a person, throwing a person in boiling water, locking him in a high-temperature sauna, keeping him in a cold place are demonstrations of particular cruelty, they contain traits of cruelty and ruthlessness of perpetrator.

Particular cruelty can be demonstrated in the form of large-scale bodily harm, torture, ill-treatment, humiliation, ridicule and other forms.

Dishonoring the victim, humiliating or other humiliation of the victim due to the imminent realization of imminent death, as a result of which he / she is subjected to severe physical and mental torture, is a demonstration of particular cruelty, where both the method of murder and other circumstances of cruelty can be combined.

Due to the circumstances of the crime and intentionally torturing the victim or his / her relative with intention to cause suffering to the next victim, as well as him / her getting murdered in the presence of a relative, should be considered as a murder committed with particular cruelty.

In cases where, due to circumstances, such as being in a state of heavy alcohol intoxication or losing consciousness after the first hit, the victim has not experienced particular torture, the perpetrator's action is also qualified as a murder committed with particular cruelty. In all cases of murder committed with particular cruelty, the common sexual feature is to inflict additional severe torture or suffering on the victim or his or her relative. In this case, there can be no difference in the qualification of the act in two equal circumstances characterizing a particular cruelty: a particular cruel way of committing a crime intentionally involving the perpetrator, other circumstances proving particular cruelty, including inflicting suffering upon the victim or his relatives.

Keywords: cruelty, particular cruelty, objective side, features, method of execution, other circumstances, actions, situation, relative, insult, humiliation, ridicule, torment, suffering.

1850-ական թվականներից սկսած մինչ օրս հանցակազմի տարրերի ուսումնասիրությունը, նրանց էությունը, բովանդակությունը, օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առանձնահատկությունները եղել են բազմաթիվ իրավաբան գիտնականների ուսումնասիրության առարկան: Հայտնի ռուս իրավագետ Ա.Ն. Տրայնինը նկատել է, որ «ինչպես առանց հանցակազմի չի կարող խոսք լինել հանցագործության մասին, այնպես էլ առանց օրենքով պահանջված տարրերի առկայության չի կարող խոսք լինել հանցակազմի մասին: Դրա համար էլ հանցակազմի տարրերի ճիշտ ըմբռնումը հանդիսանում է հանցավոր արարքի ճիշտ որակման անհրաժեշտ պայման...» [1, էջ 17]:

Ցանկացած սպանություն իրենից ներկայացնում է հանցավոր արարք կատարած անձի վարքագիծը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ամբողջություն: Այնուհանդերձ, սպանության ծանրացնող հանգամանքների ընդհանուր քրեաիրավական բնութագրման և իրավաբանական ճշգրիտ որակման, ինչպես նաև դրանց էության բացահայտման համար որոշակի նշանակություն ունի այդ հանգամանքների դասակարգումը: Հեղինակների մի խումբ սպանության ծանրացնող հանգամանքները դասակարգում է ըստ հանցակազմի տարրերի, որով փորձ է արվում ներկայացնել ծանրացնող հանգամանքների համակարգային շարադրանքը և ընդգծել այդ հանգամանքների անխզելի կապը հանցակազմի

հետ: Հեղինակների մեկ այլ խումբ, միավորելով հանցակազմի օբյեկտիվ և օբյեկտիվ կողմին վերաբերող հանգամանքները, այն համարել է որպես հանցակազմի օբյեկտիվ հատկանիշներ, իսկ սուբյեկտիվ և սուբյեկտիվ կողմին վերաբերող հանգամանքները՝ հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշներ [2, էջ 45-52]: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ ինչպես այլ դեպքերում, այստեղ էլ երբեմն որոշակի բարդություններ են առաջանում ծանրացնող հանգամանքներում կատարված մի շարք սպանություններն ըստ օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների դասակարգման ժամանակ: Օրինակ, խմբի կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանությունը իր մեջ կրում է և օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներ և նրա տեղը դրանցից մեկնումեկում խիստ պայմանական է: Այսպես, ըստ Ս.Վ. Բորոդինի՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանությունը վերաբերում է հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրող ծանրացնող հանգամանքներին, իսկ ըստ Լ.Լ. Կրուգիկովի՝ այն սուբյեկտը բնութագրող ծանրացնող հանգամանք է [3, էջ 90, էջ 25]:

Է.Է. Շտեմբերգի կարծիքով սպանության դեպքում առանձին դաժանության տակ հասկացվում է ինչպես կյանքից զրկելու առանձին դաժանությունը (օբյեկտիվ հատկանիշ), այնպես էլ հանցավորի առանձին դաժանությունը (սուբյեկտիվ հատկանիշ) [4, էջ 197-198]:

Ա.Ս. Նիկիֆորովը նույնպես նշում է, որ սպանության դեպքում առանձին դաժանությունը հանդիսանում է միաժամանակ և օբյեկտիվ, և սուբյեկտիվ կողմի հատկանիշ [5, էջ 46]:

Ա.Ն. Պոպովի կարծիքով սպանության դեպքում առանձին դաժանությունը բնութագրում է հանցակազմի օբյեկտիվ, սուբյեկտիվ կողմերը և սուբյեկտը [6, էջ 472]:

Ինչպես նկատել է Ա. Ա. Թամազյանը այս հարցի հնարավոր միասնական և ճիշտ լուծումն ունի գործնական կարևոր նշանակություն թեկուզև այն պատճառով, որ հանցակազմի սուբյեկտիվ կողմին՝ շարժառիթին, նպատակին առնչվող ծանրացնող հանգամանքները մեկ հանցագործության մեջ մրցակցում են և չեն կարող գուցորդվել, իսկ հանցակազմի այլ տարրերին առնչվող ծանրացնող հանգամանքները գուցորդվում են, համատեղվում, համակցվում [7, էջ 50]:

Ավանդաբար, ինչպես ցարական Ռուսաստանի 1845 և 1903 թվականների Օրենքների ժողովածուներով, այնպես էլ Խորհրդային Ռուսաստանի 1922 և 1926 թվականների, Խորհրդային Հայաստանի 1922 և 1927 թվականների քրեական օրենսգրքերով սահմանված «տուժողի համար առանձնակի տանջալի եղանակով կատարված սպանությունը» և հետագայում դրա փոխարեն Ռուսաստանի 1960 և 1996 թվականների և Հայաստանի Հանրապետության 1961 և 2003 թվականների քրեական օրենսգրքերով ամրագրված «առանձին դաժանությամբ կատարված սպանությունը», ելնելով կատարված արարքի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առանձնահատկություններից, հանցակազմի հատկանիշների դասակարգման մեջ վերաբերել է հանցակազմի օբյեկտիվ կողմին, եղել և մնացել որպես հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրող ծանրացնող հանգամանք:

Փաստորեն, առանձին դաժանությունը ընդունված է համարել սպանության օբյեկտիվ կողմը բնութագրող և արարքը որակյալ դարձնող հանգամանք: Սպանության գործերով դատական պրակտիկայի վերլուծությունը նույնպես հաստատում է, որ մեծամասամբ հանցագործության կատարման եղանակն է վկայում արարքում առանձին դաժանության առկայության կամ բացակայության մասին:

Մենք կողմնակից ենք առանձին դաժանությունը հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրող ծանրացնող հանգամանք համարելուն, սակայն տուժողին կյանքից զրկելու եղանակի հետ մեկտեղ խիստ կարևորում ենք նաև հանցակազմի սուբյեկտիվ կողմին վերաբերող այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, մասնավորապես՝ տուժողին հենց այդ եղանակով կյանքից զրկելու, նրան կամ նրա մերձավորին առանձին տառապանք պատճառելու կամ

այդպիսին թույլ տալու հանցավորի դիտավորությունը: Այդ մասին է վկայում նաև «Դիտավորյալ սպանությունների վերաբերյալ գործերով դատական պրակտիկայում ծագած որոշ հարցերի մասին» ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի 1963 թվականի հունիսի 3-ի որոշումը, որը առանձին դաժանությունը պայմանավորել է ոչ միայն սպանության կատարման եղանակով, այլև հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքներով, ԽՍՀՄ Գերագույն դատարանի 1975 թվականի հունիսի 27-ի «Դիտավորյալ սպանությունների վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին», Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանների համապատասխանաբար 1992 թվականի դեկտեմբերի 22-ի և 1993 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումներում տրված ձևակերպումները: Հետագայում Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի 1999 թվականի հունվարի 27-ի (2009 թվականի դեկտեմբերի 3-ի խմբագրությամբ) «Սպանության գործերով դատական պրակտիկայի մասին» որոշմամբ նույնպես ամրագրվեց այն դրույթը, համաձայն որի՝ «Առանձին դաժանության հասկացությունը կապվում է ինչպես սպանության եղանակի, այնպես էլ մեղադրյալի կողմից առանձին դաժանության դրսևորումը վկայող այլ հանգամանքների հետ: Միևնույն ժամանակ, դատական բարձրագույն ատյանը ամրագրել է, որ «սպանությունը կարող է համարվել առանձին դաժանությամբ կատարված, եթե հաստատվել է, որ այն առանձին դաժանությամբ կատարելն ընդգրկվել է հանցավորի դիտավորությամբ» [8, էջ 627-628]: Բերված ձևակերպումներից հետևում է, որ առանձին դաժանությամբ կատարված սպանությունը բնութագրող հանգամանքներ են հանդիսանում սպանության կատարման եղանակը, սպանության հետ կապված հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքները և առանձին դաժանությունը հանցավորի դիտավորությամբ ընդգրկված լինելը: Վերոգրյալները անշուշտ հանդիսանում են առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի հատկանիշներ: Այսինքն՝ **առանձին դաժան եղանակով պայմանավորված սպանության կատարման ժամանակ հանցավորը ոչ միայն գործում է առանձին դաժան եղանակով, այլև գիտակցում է իր կողմից տուժողին կյանքից զրկելու եղանակի առանձին դաժան բնույթը, ինչպես նաև ցանկանում կամ գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահը հենց այդ եղանակով, իսկ հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների դեպքում**

հանցավորը հիմնականում չի գործում առանձին դաժան եղանակով, սակայն գիտակցում է իր կողմից տուժողին կյանքից զրկելու իրավիճակի, ամբողջական հանգամանքների առանձին դաժան բնույթը, ինչպես նաև ցանկանում կամ գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահը հենց այդ կերպ:

Տվյալ դեպքում արարքի որակման հարցում որևէ տարբերակում չի կարող լինել առանձին դաժանությունը բնութագրող երկու հավասարաթեք հանգամանքների՝ հանցագործության կատարման առանձին դաժան եղանակի և առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների, այդ թվում տուժողին և (կամ) մերձավորներին առանձին տանջանք և տառապանք պատճառելու մեջ:

Տուժողին անարգելը, ստորացնելը կամ մոտալուտ մահվան գիտակցմամբ պայմանավորված այլ նվաստացումները և դրանց արդյունքում նրան ուժեղ ֆիզիկական և (կամ) հոգեկան տանջանքներ և տառապանք պատճառելը առանձին դաժանության դրսևորումներ են, որտեղ թե սպանության կատարման եղանակը, և թե հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքները կարող են համատեղվել և գուգորդվել:

Մ.Ս. Կորոբեյնիկովը առանձին դաժանությունը կապում է ինչպես հանցագործության կատարման եղանակի, այնպես էլ հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշների հետ: Վերջինս առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների տակ նկատի է առնում բացառապես սուբյեկտիվ կողմի հատկանիշները [9, էջ 14]:

Տ.Վ. Կոնդրաշովան նույնպես առանձին դաժանությունը կապում է հանցագործության կատարման եղանակի հետ՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշներից մեկի, և որոշ չափով սուբյեկտիվ բնույթի հատկանիշների հետ, մասնավորապես՝ պայմանավորված հանցավորի անձով [10, էջ 75]:

Ա.Ն. Իզնատովի կարծիքով առանձին դաժանությունը կարող է դրսևորվել նախ միջև մահ պատճառելը տուժողին առանձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելով, ապա՝ տուժողի մերձավորների ներկայությամբ կատարված սպանության դեպքում՝ վերջիններիս առանձին հոգեկան տառապանք պատճառելով [11, էջ 11]:

Ա.Ն. Կրասիկովը առանձին դաժանությամբ կատարված սպանության շարքին է դասում միայն սպանության կատարման եղանակը, մասնավորապես՝ հանցավորի այնպիսի գործողությունները, ինչպիսիք են՝ կյանքից զրկելուց առաջ տուժողին մեծ թվով վնասվածքներ հասցնելը, տանջելը, խոշտանգելը, անձին ողջակիզելը և այլն [12, էջ 68]:

Ս.Ի. Տիշկևիչի կարծիքով առանձին դաժանությունը կարող է դրսևորվել տուժողին առանձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելով, ինչպես նաև սպանության կատարման ժամանակ վայրագության, առանձնակի անողորմության և անգթության դրսևորմամբ [13, էջ 47]:

Վ.Գ. Բեյանը և Ն.Մ. Սվիդովը նույնպես գտնում են, որ սպանության դեպքում առանձին դաժանության հիմնական դրսևորումը պայմանավորված է տուժողին կյանքից զրկելու եղանակով: Չնայած դրան, հեղինակները գտնում են, որ որոշ դեպքերում սպանության առանձին դաժանությունը որոշվում է և այլ հանգամանքների հաշվառմամբ: Այդպիսիք են՝

1. տուժողի մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը, երբ հանցավորը գիտակցել է նրանց առանձին տառապանք պատճառելը:

2. դիակն անարգանքի ենթարկելը, բացառությամբ հանցագործությունը թաքցնելու նպատակով դիակի ոչնչացման կամ մասնատման դեպքերի:

3. կյանքից զրկելուց առաջ կամ սպանության ընթացքում տուժողին դիտավորությամբ կտտանքների կամ խոշտանգման ենթարկելը [14, էջ 26-27]:

Փաստորեն, սպանությունը առանձին դաժանությամբ կատարված լինելը հավաստող հանգամանքների հարցում նույնպես միասնական դիրքորոշում գոյություն չունի: Հեղինակների մի խումբ գտնում է, որ առանձին դաժանությունը վկայող հանգամանքները վերաբերում են սպանության կատարման եղանակին, այսինքն՝ հանցակազմի օբյեկտիվ կողմին, մեկ այլ խումբ գտնում է, որ եղանակից բացի առանձին դաժանության մասին վկայում են նաև սուբյեկտիվ կողմի հանգամանքները: Երրորդ խումբ հեղինակները գտնում են, որ եղանակից բացի առանձին դաժանության մասին կարող են վկայել նաև հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ օբյեկտիվ հանգամանքներ, իսկ չորրորդ խումբ հեղինակների կարծիքով առանձին դաժանությունը վկայող հանգամանքների շարքին են դասվում ինչպես հանցագործության օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հատկանիշները, այդ թվում նաև հանցավորի անձը և կատարված արարքը բնութագրող բոլոր հանգամանքները:

Այս ամենով հանդերձ, ինչպես նկատել ենք, առանձին դաժանությունը ընդունված է համարել հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրող և արարքը որակյալ դարձնող հանգամանք, որքանով որ **մեծամասամբ հանցագործության կատարման եղանակն և արտաքին այլ հանգամանքներն են վկայում արարքում առանձին դաժանության առկայության կամ**

բացակայության մասին: Այսինքն, առանձին դաժանության դրևորման մասին առաջին հերթին վկայում են արարքի արտաքին հատկանիշները: Անշուշտ կարևորվում է նաև տուժողին առանձին տառապանք պատճառելու հանցավորի դիտավորությունը, որի մասին առավել մանրամասն անդրադարձ կարվի առանձին դաժանությամբ կատարված սպանությունների սուբյեկտիվ հատկանիշների վերլուծության ժամանակ:

Նախքան սպանության և առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի վերլուծությանն անդրադառնալը, կարծում ենք, նպատակահարմար է քրեական իրավունքի տեսությամբ հաստատված դրույթների շրջանակներում համառոտակի անդրադառնալ ընդհանրապես հանցագործության օբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագրին, հասկացությանը, պարտադիր տարրերին, հանցավոր արարքի որակման հարցում ունեցած դերին ու նշանակությամբ:

Այսպես, քրեական իրավունքի տեսության մեջ հանցագործության օբյեկտիվ կողմ ասելով հասկացվում է որոշակի տեղում, ժամանակում, պայմաններում կատարվող և քրեաիրավական պաշտպանության օբյեկտներին վնաս պատճառող **հանրորեն վտանգավոր արարքի արտաքին կողմը, նրա արտաքին դրսևորումը՝** հանցավոր նպատակի իրագործումը: Հանցագործության արտաքին կողմը, նրա դրսևորումը՝ հանցավոր նպատակի իրագործումը, վերջին հաշվով՝ հանցագործության կատարումը, հանդիսանում է անձի հանցավոր գործունեության հիմնական նպատակի իրականացումը: Դրանով էլ պայմանավորված է հանցագործության օբյեկտիվ կողմի խիստ կարևոր դերն ու նշանակությունը: Այդ մասին է վկայում նաև այն, որ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածների դիսպոզիցիաներում առավել հաճախ ամրագրվում է հենց հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշները:

Քրեական օրենքի դիսպոզիցիայում նկարագրվում է հանցավոր ոտնձգության այն արտաքին հատկանիշները, որոնք ամբողջության մեջ կազմում և բնութագրում են հանցակազմի օբյեկտիվ կողմը: Հանցագործության արտաքին կողմի տարրերը քրեական օրենքում նկարագրված են որպես հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրող հանցակազմի հատկանիշներ: Հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր տարրերը միշտ հանդիսանում են հանցակազմի հատկանիշներ: Քրեական իրավունքի տեսության համաձայն հանցակազմի օբյեկտիվ կողմն իր մեջ ընդգրկում է. 1) հանրորեն վտանգավոր արարքի (գործողություն կամ անգործություն) արտաքին, ֆիզիկական կողմը,

2) հանրորեն վտանգավոր հետևանքները, 3) պատճառական կապը հանրորեն վտանգավոր արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքի միջև, 4) հանցագործության կատարման տեղը, ժամանակը, եղանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները:

Անձի հանրորեն վտանգավոր վարքագծի արտաքին դրսևորումը օրենսդրի կողմից ձևակերպվել է ոչ այլ կերպ, քան «արարք» եզրույթով, որն իր մեջ ներառում է այդ վարքագծի երկու ձևերը՝ գործողությունը և անգործությունը: Հանրորեն վտանգավոր վարքագծի արտաքին դրսևորումը օրենսդրի կողմից «արարք» եզրույթով ձևակերպելը բխում է հանցագործության հասկացության օրենսդրական ձևակերպումից, համաձայն որի հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է քրեական օրենսգրքով:

Սպանության օբյեկտիվ կողմը արտահայտվում է ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելու մեջ: «Ապօրինաբար» եզրույթի կիրառումը կարևոր նշանակություն ունի, որքանով որ ապօրինաբար չդիտվող գործողությունների արդյունքում (օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմաններում կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում) այլ անձի կյանքից զրկելը ոչ միայն սպանություն, այլև ընդհանրապես որևէ հանցագործություն չի համարվում:

Օբյեկտիվ կողմից սպանության պարտադիր հատկանիշներն են՝

ա. այլ անձին կյանքից զրկելուն ուղղված գործողությունը կամ անգործությունը,

բ. տուժողի մահը որպես հանցագործության պարտադիր հետևանք,

գ. պատճառական կապը հանցավոր գործողության (անգործության) և հանցավոր հետևանքի միջև:

Ինչ վերաբերում է հանցագործության օբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշ հանդիսացող հանցագործության կատարման եղանակին, իրադրությանը և այլ հանգամանքներին, սպա այն դեպքում, երբ նրանք հանդես են գալիս որպես սպանության հիմնական հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, հանցավորի արարքը ենթակա է որակման որպես ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն: Որպես օրինակ կարող են հանդիսանալ առանձին դաժանությամբ կամ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանությունները և այլն:

Ինչպես նկատել է Մ.Վ. Գրիգորյանը հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրող պարտադիր և ֆակուլտատիվ (ոչ պարտադիր) հատկանիշների փոխհարաբերության վերաբերյալ «հանցակազմի օբյեկտիվ կողմի համար

ընդհանրապես ֆակուլտատիվ համարվող հատկանիշը ձեռք է բերում պարտադիր հատկանիշի նշանակություն, երբ օրենսդրի կողմից ուղղակիորեն նախատեսվում է որպես այս կամ այն կոնկրետ հանցակազմի ատրիբուտ (որոշիչ, անկապտելի հատկանիշ՝ հեղ.): Այսպես, օրինակ՝ ըստ վերը ներկայացված դասակարգման՝ հանցագործության կատարման եղանակը օբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշ է, բայց այն պարտադիր հատկանիշի նշանակություն ունի ծանրացնող հանգամանքներում կատարված սպանության համար, քանի որ այստեղ օրենսդիրը ոտնձգության կատարման եղանակը (առանձին դաժանությունը) ընդգրկել է իբրև քննարկվող հանցակազմի հատկանիշ» [15, էջ 82-83]:

Եթե հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշների թվարկման հարցում տարակարծություններ չկան, ապա նույնը չի կարելի ասել օբյեկտիվ կողմի այդ հատկանիշները պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշների թվին դասելու մասով: Եվ եթե հանցագործության կատարման տեղը, ժամանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները բոլոր հետազոտողների կողմից դասվել են օբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշների թվին, այդ թվում և այն դեպքերում, երբ նրանք կոնկրետ գործերով հանդես են եկել որպես հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ և այդ առումով ձեռք են բերել պարտադիր հատկանիշի նշանակություն, ապա նույնը չի կարելի ասել օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ համարվող հանցավոր հետևանքների և արարքի ու հետևանքների միջև պատճառական կապի մասին: Վերջիններիս կարծիքով բոլոր հանցակազմերի համար որպես պարտադիր հատկանիշ կարող է լինել միայն հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ անգործությունը), իսկ մյուս հատկանիշները ֆակուլտատիվ են՝ ոչ պարտադիր, այդ թվում՝ հանցավոր հետևանքը և հանցավոր արարքի ու հետևանքի միջև պատճառական կապը, որքանով որ վերջիններս, ի տարբերություն հանրորեն վտանգավոր արարքի, որպես պարտադիր հատկանիշ չեն կարող հանդես գալ ձևական հանցակազմերով հանցագործություններում:

Բոլոր դեպքերում **քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:** Այսինքն, արարքը ցանկացած հանցակազմի պարտադիր հատկանիշ է, որը դրսևորվում է հանրորեն վտանգավոր և հակաօրինական գործողություններով կամ անգործությամբ: Արարքը (գործողությունը կամ անգործությունը) անձի վարքագծի դրսևորումն

է արտաքին աշխարհում, որը միշտ ունի կոնկրետ դրսևորում, կատարվում կամ թույլ է տրվում կոնկրետ տեղում, կոնկրետ ժամանակ, կոնկրետ իրավիճակում, կոնկրետ պայմաններում, կոնկրետ անձի կամ անձանց կողմից: Արարքի հանրորեն վտանգավորությունը արտահայտվում է կոնկրետ հասարակական հարաբերություններին վնաս հասցնելով, իսկ արարքի հանրային վտանգավորության աստիճանը պայմանավորվում է պատճառված վնասի չափով և բնույթով:

Հանրորեն վտանգավոր արարքի կարևոր հատկանիշերից են նաև նրա գիտակցված և կամային լինելը, այսինքն՝ անձի կողմից իր կատարած հանցավոր արարքի փաստական հանգամանքների գիտակցումը և արարքի կատարման կամահայտնության դրսևորումը: Անձը գիտակցում է իր կողմից կատարած արարքի փաստական էությունը, հանրորեն վտանգավորությունը: Անձը գիտակցում է թե ինչ հանցանք է կատարում, ում նկատմամբ, ինչ եղանակով և նախատեսում է արարքի հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը կամ դրա առաջացման հնարավորությունը:

Փաստորեն քրեաիրավական գործողությունը մարդու հանրորեն վտանգավոր, հակաօրինական, գիտակցված և կամային հատկանիշներով օժտված ակտիվ վարքագիծն է, իսկ քրեաիրավական անգործությունը՝ մարդու վարքագծի պասիվ ձևն է, որն արտահայտվում է կոնկրետ այնպիսի գործողություն չկատարելու մեջ, որն անձը պարտավոր էր և կարող էր կատարել: Իսկ ընդհանուր առմամբ հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներին բնորոշ են հանցավոր գործողության կամ անգործության դրսևորումը, նրա հանրորեն վտանգավոր և հակաօրինական բնույթի գիտակցված և կամային լինելը:

Սպանությունը հիմնականում կատարվում է գործողությամբ՝ տուժողի օրգանիզմի վրա անմիջական ֆիզիկական ներգործության միջոցով, որը կարող է դրսևորվել հրագեների, դանակի կամ այլ առարկաների գործադրմամբ, հրկիզման, պայթուների, թունավորման և այլ եղանակներով:

Անգործությամբ կատարվող սպանությունների թիվը անհամեմատ քիչ է: Այն հիմնականում դրսևորվում է տուժողի նկատմամբ հանցավորի պարտավորությամբ պայմանավորված վերջինիս մահը կանխող կոնկրետ հնարավոր գործողությունները դիտավորությամբ չկատարելու մեջ: Անգործությամբ կատարվող սպանությունների դասագրքային օրինակներ են՝ սպանության նպատակով բժշկի կողմից հիվանդին օգնություն ցույց չտալը, նույն նպատակով մոր կողմից նորածին երեխային չկերակրելը և այլն:

Սպանությունը հնարավոր է կատարել նաև հոգեբանական ներգործությամբ: Ինչպես նշում է պրոֆեսոր Լ.Լ. Կրուզիկովը, հոգեբանական ներգործությունը նույնքան մահվան մտածված պատճառ է, որքան որ ֆիզիկական ներգործությունը հանդիսացող կրակոցը, դանակահարությունը և այլն [16, էջ 22]:

Հանցագործության օբյեկտիվ կողմի կարևոր հատկանիշներից է հանրորեն վտանգավոր հետևանքը, որը հանդիսանում է հանցավոր գործողության կամ անգործության արդյունքը և նյութական հանցակազմերի դեպքում նկարագրված է օրենքի դիսպոզիցիայում:

Սպանությունը նյութական հանցակազմ ունեցող հանցագործություն է, որն ավարտվում է հանցավոր հետևանքի առաջացմամբ:

Հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից է հանցավոր գործողության կամ անգործության և հետևանքի միջև պատճառական կապի առկայությունը, որը քրեական պատասխանատվության անհրաժեշտ պայմաններից մեկն է:

Չնայած պատճառական կապի հավաստումը շատ դեպքերում առանձին դժվարություն չի ներկայացնում, այնուամենայնիվ, որոշ դեպքերում այն իրենից որոշակի բարդություններ է առաջացնում:

Պատճառական կապի առկայությունը կամ բացակայությունը կապված չէ մեղքի հետ, այն անձի գիտակցական և կամային վերաբերմունքից անկախ գոյություն ունեցող օբյեկտիվ երևույթ է: Պատճառական կապի առկայությունը բոլոր դեպքերում չէ, որ նշանակում է մեղքի առկայություն: Եվ ինչպես հին հռոմեացիներին հայտնի տրամաբանական կանոնն էր ասում՝ «դրանից հետո՝ պարտադիր չի նշանակում դրա պատճառով»:

Ընդունված է համարել, որ հանցավոր գործողության և հետևանքի միջև պատճառական կապը կարող է առկա համարվել, եթե հանցավոր գործողությունները ժամանակի առումով նախորդել են հանցավոր արդյունքի առաջացմանը, հանդիսացել են հանցավոր արդյունքի առաջացման անհրաժեշտ և պարտադիր պայման:

Ինչպես նկատել է ակադեմիկոս Վ. Ն. Կուդրյավցևը սպանության հանցակազմում պատճառական կապը առավել կարճ է, անմիջական [17, էջ 146]:

Ինչպես նշել է Ա. Ա. Թամազյանը «հետևանքը պետք է լինի հանցավոր գործողության (անգործության) անհրաժեշտ արդյունք: Անձի գործողությունը միայն այն դեպքում կարող է համարվել պատճառ, եթե դրա կատարման պահին այն հետևանքի առաջացման համար անհրաժեշտ և պարտադիր

պայման է, առանց որի նման հետևանք չէր կարող առաջանալ» [18, էջ 13]:

Սպանության օբյեկտիվ կողմը դրսևորվում է այլ անձին ապօրինաբար կյանքից զրկելու մեջ:

Քննարկվող հանցակազմի որակյալ հատկանիշը առանձին դաժանությունն է: Չնայած բոլոր սպանություններին հատուկ է դաժանությունը, սակայն հանցանքը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար պահանջվում է ոչ թե ցանկացած, այլ հատուկ, բացառիկ, կամ ինչպես ձևակերպված է օրենքում՝ առանձին դաժանություն: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքերով սահմանված առանձին դաժանությամբ կատարված սպանության համատեքստում **օրենքը առանձին դաժանությունը կապում է ինչպես սպանության կատարման եղանակի, այնպես էլ հանցավորի կողմից առանձին դաժանության դրսևորումը վկայող այլ հանգամանքների հետ:** Որպես առանձին դաժանության հատկանիշ, մասնավորապես, կարող են դիտվել այն դեպքերը, երբ կյանքից զրկելուց առաջ կամ սպանության ընթացքում տուժողի նկատմամբ կիրառվել են տանջանքներ, խոշտանգում կամ նա ենթարկվել է ծաղրուծանակի կամ սպանությունը կատարվել է այնպիսի եղանակով, որը հանցավորի համար ակնհայտորեն կապված է տուժողին առանձնակի տանջանքներ պատճառելու հետ (մեծ թվով մարմնական վնասվածքներ հասցնելը, տանջալիորեն ազդող թույն օգտագործելը, մարդուն կենդանի այրելը, երկար ժամանակ սննդից, ջրից զրկելը և այլն):

Առանձին դաժանությունը կարող է դրսևորվել նաև այն ժամանակ, երբ սպանությունը կատարվել է տուժողի մերձավորների ներկայությամբ և հանցավորը գիտակցել է, որ իր գործողություններով նրանց հատուկ տառապանք է պատճառում:

Առանձին դաժանությունը կարող է համարվել նաև հաջորդ գոհի ներկայությամբ կատարված սպանությունը, երբ հանցավորը նախատեսել է, գիտակցել իր գործողություններով վերջինիս հատուկ ցավ և տառապանք պատճառելը:

Փաստորեն առանձին դաժանությունը դա սպանությունից առաջ կամ սպանության կատարման ընթացքում տուժողին մահվան հետևանքի առաջացման համար ոչ պարտադիր, դրա շրջանակից դուրս, առանձին, հավելյալ, ուժեղ, ծանր ֆիզիկական և (կամ) հոգեկան տառապանք պատճառելն է:

Առանձին դաժանություն կարող է դրսևորվել նաև այն ժամանակ, երբ տուժողին առանձին տանջանք և տառապանք պատճառելու եղանակ

կով սպանելու հանցավորի դիտավորությունը հանգամանքների բերումով չի իրականացվել և տուժողը առանձին տանջանք կամ տառապանք չի զգացել, մասնավորապես՝ կապված ակոհոլային ուժեղ հարբածության վիճակում գտնվելու կամ առաջին հարվածից հետո գիտակցությունը կորցրած լինելու հետ:

Ա.Ն. Պոպովը առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ հատկանիշները պայմանավորում է՝

ա. սպանության կատարման եղանակով, որի դեպքում տուժողին պատճառվում է տևական, ուժեղ ֆիզիկական ցավ և տառապանք,

բ. սպանության իրավիճակով, որի դեպքում տուժողին կամ նրա մերձավորին պատճառվում է առանձնակի հոգեկան տառապանք,

գ. սպանության կատարման ժամանակ հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ օբյեկտիվ հանգամանքներով [19, էջ 392]:

Փաստորեն հեղինակը նույնպես օբյեկտիվ կողմից առանձին դաժանության դրսևորումները կապում է սպանության կատարման եղանակի, հանցագործության կատարման իրավիճակի, ինչպես նաև հանցավորի կողմից առանձին դաժանություն դրսևորելու մասին վկայող այլ օբյեկտիվ հանգամանքների հետ:

Առանձին դաժանությունը հիմնականում դրսևորվում է ակտիվ գործողությամբ, սակայն այն կարող է դրսևորվել նաև անգործությամբ, որի դասագրքային օրինակների մասին արդեն նշել ենք: Ավելացնենք միայն, որ վերջին դեպքում սպանությունը համարվում է առանձին դաժանությամբ կատարված, երբ հանցավորի վրա դրված է եղել հանցավոր հետևանքների առաջացման կանխումն ու խափանումը և հանցավորի դրսևորած անգործությունը պայմանավորված է նրա կողմից տուժողին առանձին տանջանքներ պատճառելու դիտավորությամբ: Տվյալ դեպքում, ինչպես նկատել են Պ.Յու. Կոնստանտինովը, Ա. Ա. Տեր-Ակոպովը և այլք, անգործությունը իր հոգեֆիզիկական բնույթով չի տարբերվում գործողությունից: Դրսևորման այս երկու ձևերն էլ հանդիսանում են անձի նյարդային վարքագծի արդյունք [20, էջ 7-10, էջ 29; 21, N 4 (20)]:

Որոշ դեպքերում առանձին դաժանությամբ սպանությունը օբյեկտիվ կողմից իր մեջ կրում է գործողության և անգործության համատեղ դրսևորում, երբ գործողությունը ստեղծում է հանցավոր հետևանքի առաջացման իրական վտանգ, իսկ տևական ժամականով անգործությունը հանգեցնում է հանցավոր հետևանքի՝ տուժողին մահվան առաջացմանը: Օրինակ՝ դանդաղ և տանջալիորեն ազդող թույնի օգտագործման միջոցով սպանություն կատարելիս հանցավորը նախ տուժողին թունավորում է, ապա ունենալով տևական ժամանակ և

հնարավորություն կանխելու հանցավոր հետևանքի առաջանալը միտումնավոր չի անում այդ: Նույնը վերաբերում է անձին սահմանվածից բարձր կամ ցածր ջերմային ռեժիմով պայմաններում պահելու եղանակով կատարված սպանության դեպքերին:

Սպանության առանձին դաժանությունը բնութագրող եղանակները բազմաթիվ են և հնարավոր չէ նրանց սպառնիչ թվարկումը: Սակայն նրանց բոլորի համար որպես ընդհանուր սեռային հատկանիշ կարող է հանդիսանալ տուժողին կամ նրա մերձավորին լրացուցիչ տանջանք կամ տառապանք պատճառելը: Նման դիրքորոշումը կիսում են նաև բազմաթիվ հեղինակներ:

Արդեն իսկ նկատել ենք, որ դաժանությունը կարող է արտահայտվել մեծ թվով մարմնական վնասվածքներ հասցնելու, խոշտանգման, տանջահարման, մարդկային արժանապատվությունը ստորացնելու, ծաղրուծանակի և այլ եղանակներով: Որոշ դեպքերում սպանության կատարման եղանակը ակնհայտորեն վկայում է հանցավորի դրսևորած առանձին դաժանության մասին: Օրինակ՝ անձին կենդանի կիզելը, կենդանի թաղելը, շիկացած երկաթով այրելը, եռացող ջրի մեջ մցնելը, բարձր ջերմային ռեժիմով շոգեբաղնիքում փակելը, սառնարանային պայմաններում պահելը առանձին դաժանության դրսևորման եղանակներ են, որպիսիք իրենց մեջ կրում են հանցագործի դրսևորած անողորության, անզթության, անասելի դաժանության հատկանիշներ: Նման պայմաններում կատարված սպանությունները ենթակա են որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություններ:

Քննարկվող ծանրացնող հատկանիշ է պարունակում նաև հանցագործության կատարման այնպիսի եղանակը, ինչպիսին տանջանքն է, որի տակ հասկացվում է տուժողին իր կենսական պահանջմունքներից՝ սննդից, ջրից, ջերմությունից տևական ժամանակով զրկելը կամ նրան անբարենպաստ՝ լուսային, ջերմային, անհամեմատ սառը կամ տաք պայմաններում տեղավորելը կամ պահելը և դրա արդյունքում՝ տուժողին առանձին տառապանք պատճառելը:

Առանձին դաժանության մասին է վկայում նաև տուժողին տևական ժամանակով կամ որոշակի ընդմիջումներով ոտքերով և ձեռքերով հարվածներ հասցնելու հետևանքով դիտավորությամբ կյանքից զրկելը:

Առանձին դաժանությամբ կատարված սպանությունը նյութական հանցակազմ ունեցող հանցագործություն է, որի պարտադիր հատկանիշը հանցավոր գործողության կամ անգործության արդյունք հանդիսացող հանցավոր հետևանքն է: Իրավաբանական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել առանձին

դաժանությամբ կատարված սպանության հետևանքի վերաբերյալ: Այսպես, Ս.Վ. Բորոդինը նշում է, որ առանձին դաժանությամբ սպանության դեպքում առաջացած արդյունքը (հանրորեն վտանգավոր հետևանքը) հանդիսանում է ոչ թե տուժողի մահը, այլ առանձին դաժանությունը [22, էջ 109]: Լ.Ա. Անդրեևան և Պ.Յու.Կոնստանտինովը առանձին դաժանությամբ սպանության հանրորեն վտանգավոր հետևանքները (հանցավոր արդյունքը) համարում են գուտ տուժողին մահ պատճառելը: Նրանք գտնում են, որ տանջանքներն ու տառապանքները չեն կարող դիտվել որպես առանձին դաժանության հետևանքներ [23, էջ 138]: Այդ կարծիքին են նաև Ա.Ի. Ստրելնիկովը, Ն.Վ. Բորիսենկովան [24, էջ 66, էջ 144]:

Օ.Վ. Արտյուշինայի կարծիքով սպանության բոլոր դեպքերում, երբ հանցավորը գործել է կամ անգործություն է դրսևորել տուժողին առանձին տանջանքներ պատճառելու դիտավորությամբ, առկա է առանձին դաժանությամբ կատարված սպանություն, նույնիսկ այն դեպքում, երբ տարբեր հանգամանքներից ելնելով, օրինակ՝ ծանր ակոհոլային հարբածության կամ գիտակցության կորստի պատճառով տուժողը ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք չի զգացել [25, էջ 34]:

Առանձին դաժանությամբ սպանության հանցավոր արդյունքը (հանրորեն վտանգավոր հետևանքները) դրսևորվում է տուժողին առանձին դաժանությամբ մահ պատճառելու մեջ:

Այն դեպքերում, երբ հանցավորի դիտավորությամբ ընդգրկված հանցավոր հետևանքը չի առաջացել հանցավորի կամքից անկախ պատճառներով այն նախապատրաստության փուլում կանխվելու արդյունքում, ապա առկա է առանձին դաժանությամբ սպանության կատարման նախապատրաստություն: Օրինակ՝ տուժողին հրկիզման եղանակով սպանելու նպատակով անձը ձեռք է բերել բենզին կամ այլ դյուրավառ հեղուկ, սակայն իր կամքից անկախ պատճառներով հանցագործությունը կանխվել է նախապատրաստության փուլում, առկա է առանձին դաժանությամբ կատարված սպանության նախապատրաստություն, իսկ երբ հանցավորը հասցրել է բենզինը կամ այլ դյուրավառ հեղուկը լցնել անձի վրա և հրկիզել, սակայն հանցավոր հետևանքը չի առաջացել իր կամքից անկախ պատճառներով (բժշկական ակտիվ միջամտության շնորհիվ և այլն) առկա է առանձին դաժանությամբ կատարված սպանության փորձ: Փոքր ինչ վիճահարույց է այն իրավիճակների քրեաիրավական գնահատումը, երբ հանցավորը բենզինը կամ այլ դյուրավառ հեղուկը լցրել է անկողնում պառկած, սակայն մինչ այդ մահացած անձի վրա և հրկիզել, չիմանալով վերջինիս մահացած լինելու մասին: Հեղինակների մի մասի

կարծիքով, նման դեպքում, հանցավորի արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության նախապատրաստություն, որքանով որ մարդու մահը արդեն իսկ դադարեցրել է նրա կյանքի քրեաիրավական պաշտպանությունը և տվյալ դեպքում անձի մահը հանցավորի գործողության հետևանք չէ, այն պատճառակա կապի մեջ չի գտնվում հանցավորի գործողությունների հետ [26, էջ 79]: Հեղինակների մեկ այլ խումբ էլ նշում է, որ նման դեպքում ակնհայտ է, որ հանցավորն իր գործողություններով ամեն ինչ արել է տուժողին առանձին դաժանությամբ սպանելու համար, սակայն հանցավոր հետևանքը չի առաջացել նրա կամքից անկախ պատճառներով, հետևաբար նման դեպքում հանցավորի արարքը պետք է որակել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության փորձ: Օ.Ա. Արտյուշինայի կարծիքով քրեական օրենսդրությունը պաշտպանում է ոչ այնքան տուժողի կյանքը, որքան մարդկային կյանքն ամբողջությամբ որպես բարձրագույն արժեք [27, էջ 36]:

Առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հաջորդ պարտադիր հատկանիշը պատճառական կապն է հանցավոր գործողության (անգործության) և հանրորեն վտանգավոր հետևանքի միջև: Ինչպես ցանկացած սպանության դեպքում, այնպես էլ առանձին դաժանությամբ կատարված սպանության դեպքում հետևանքը պետք է լինի հանցավոր գործողության (անգործության) անհրաժեշտ արդյունք: Անձի գործողությունը (անգործությունը) միայն այն դեպքում կարող է համարվել պատճառ, եթե դա կատարման պահին այն հետևանքի համար անհրաժեշտ և պարտադիր պայման է, առանց որի նման հետևանք չէր կարող առաջանալ:

Որոշ հեղինակների կարծիքով առանձին դաժանությամբ կատարված սպանություն պետք է համարել նաև հանցավորի հետ ազգակցական հարաբերությունների մեջ գտնվող անձի սպանությունը [28, էջ 126]:

Այն, որ բռնությունն ու դաժանությունը խաթարում են մարդկային արժեհամակարգը, բարեկեցությունն ու հոգևոր բավարարվածությունը՝ հասկանալի է: Հասկանալի է նաև, որ մերձավորի նկատմամբ հանցանք կատարածը ի վիճակի է այլ անձանց նկատմամբ առավել ծանր հանցանք կատարել, սակայն հենց միայն այդ համարել ծանրացնող հանգամանք ընդունելի չէ և կարծում ենք կարիք չկա այս հարցում կրկին վերադառնալ միջնադար:

Չնայած տուժողի վարքագիծը քննարկվող հանցակազմի կառուցվածքային հատկանիշ չի հանդիսանում, այնուհանդերձ օրենսդրությունը և դատական պրակտիկան կարևորում են տուժողի վարքագծի բացահայտումը և գտնում,

որ տուժողի իրավաչափ և ոչ իրավաչափ գործողությունները կարող են կարևոր նշանակություն ունենալ հանցավոր արարքի հատկանիշների պարզաբանման, հետևաբար և արարքի ճիշտ որակման հարցում: Մասնավորապես՝ տուժողի անօրինական կամ անբարոյական վարքագիծը կարող է հիմք հանդիսանալ հանցավորի արարքը բոլորովին այլ կերպ՝ այն է հասարակ կամ մեղմացնող հանգամանքներում կատարված սպանություն որակելու համար: Տուժողի անօրինական կամ անբարոյական վարքագիծը կարող է հանցավորի մոտ վերջինիս բազմաթիվ մարմնական վնասվածքներ պատճառելու շարժառիթ հանդիսանալ, մի բան, որի օրինակները բազմաթիվ են դատական պրակտիկայում: Իսկ ինչպես հայտնի է վնասվածքների բազմակիությունը միայն այն դեպքում է համարվում առանձին դաժանությամբ կատարված սպանության հատկանիշ, երբ հանցավորի դիտավորությամբ ընդգրկվել է այդ եղանակով սպանության ընթացքում տուժողին առանձին, ուժեղ, լրացուցիչ տառապանքներ պատճառելը:

Առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշներից է նաև սպանության կատարման տեղը, ժամանակը, գործիքները, հանցագործության կատարման իրավիճակը, իրադրությունն ու հանգամանքները:

Սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշներից է տուժողին մեծաքանակ հարվածներ և մարմնական վնասվածքներ պատճառելը, խոշտանգումը, մերձավորի ներկայությամբ սպանությունը, ինչպես նաև հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքները, որոնց կանդախտանալը հաջորդիվ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Трайнин А. Н.** Учение о составе преступления / Избранные труды. – СПб., Юридический центр «Пресс» 2004.
2. **Թամազյան Ա. Ա.** Սպանությունների որակման հիմնախնդիրները: – Եր.: «Ֆենոմեն», 2011.
3. **Бородин С. В.** Преступления против жизни. – М., «Юристь», 1999, Уголовное право России, Часть особенная, под редакцией Кругликова Л. Л., М., 1999.
4. **Штемберг Э. Э.** Уголовно-правовая и криминологическая характеристика убийства, совершенного с особой жестокостью. Дис. канд. юрид. Наук. – Ставрополь, 2003.
5. **Никифоров А. С.** Ответственность за убийство в современном уголовном праве. Комментарий. – М. ЦентрЮрИнфор, 2009.
6. **Попов А. Н.** Убийство при отягчающих обстоятельствах. – СПб. Изд.-во Юридический центр «Пресс» 2003.

7. **Թամազյան Ա. Ա.** Սպանությունների որակման հիմնախնդիրները: – Եր.: «Ֆենոմեն», 2011.
8. **Сборник постановлений Пленума Верховного Суда СССР 1924-1986 гг.** / Под. Общ. ред. В.И. Теребилова. – М.
9. **Уголовная ответственность за посягательства на жизнь граждан.** / Под.ред. Н.И. Ветрова, Ю.И. Ляпунова. – М., 1995.
10. **Кондрашова Т. В.** Проблемы уголовной ответственности за преступления против жизни, здоровья, половой свободы и неприкосновенности. – Екатеринбург. 2000.
11. **Игнатов А. Н.** Квалификация умышленных убийств из хулиганских побуждений и с особой жестокостью. // Сов. юстиция, 1975, N18.
12. **Красиков А. Н.** Ответственность за убийство по российскому уголовному праву. – Саратов, 1999.
13. **Тишкевич С. И.** Квалификация преступлений против жизни. – Минск, 1991.
14. **Беляев В. Г.** Свидлов Н.М. Вопросы квалификации убийств. – Волгоград ВСШ МВД СССР, 1984.
15. **Չրիգորյան Մ. Վ.** Հանցագործության ևսանձնքը քրեական իրավունքում: – Եր.: «Չանգակ-97» 2001.
16. **Кругликов Л. Л.** Уголовное право России. Часть особенная. – М. 1999.
17. **Кудрявцев В. Н.** Общая теория квалификации преступлений. – М. Изд.-во «Юристь» 2001.
18. **Թամազյան Ա. Ա.** Սպանությունների որակման հիմնախնդիրները: – Եր.: «Ֆենոմեն», 2011.
19. **Попов А. Н.** Убийства при отягчающих обстоятельствах. – СПб., Изд.-во Юридический центр «Пресс» 2003.
20. **Константинов П. Ю.** Влияние жестокости преступного поведения на квалификацию убийств. // Законность. – М., 2011, N9, Тер-Акопов А.А. Бездействие, как форма преступного поведения. – М. 1980.
21. **Бунина А. Ф.** Объективная сторона убийства, совершенного с особой жестокостью. // «Научно-практический электронный журнал Аллея Науки» N 4 (20) 2018. Alleya-science.ru.
22. **Бородин С. В.** Преступления против жизни. – М., Изд.-во «Юристь» 1999.
23. **Андреева Л. А., Константинов П. Ю.** Влияние жестокости преступного поведения на уголовную ответственность. – СПб, Изд.-во Юридический центр «Пресс» 2002.
24. **Стрельников А. И.** Ответственность за убийство, совершенное при обстоятельствах, отягчающих наказание. – М. 2002, Борисенкова Н.В. Уголовно-правовая оценка жестокости: дис...канд. юрид. наук. – М., 2005.
25. **Артюшина О. В.** Квалификация убийства, совершенного с особой жестокостью. – Казань, Типография КЮИ МВД России, 2003.
26. **Штемберг Э. Э.** Уголовно-правовая и криминологическая характеристика убийства, совершенного с особой жестокостью: абтореф. дис...канд. Юрид наук. – Ростов-на -Дону. 2003.

27. **Артюшина О. В.** Квалификация убийства совершенного с особой жестокостью. – Казань, Типография КЮИ МВД России, 2013.
28. **Тришина Ж. В., Насрединова К. А.** Проблемные аспекты законодательной регламентации убийства, совершенного с особой

жестокостью. // Вестник Владимирского юридического института, 2016. N3(40).

Сдана/Հանձնվել է՝ 18.05.2021

Рецензирована/Գրախոսվել է՝ 20.05.2021

Принята/Ընդունվել է՝ 25.05.2021